

ՀԱՄԱԺՈՂՈՎ
«ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ԱՅՍՕՐ»

ՓԱՐԻՁ. 17 ՀՈՒՆԻՍԻ 2000Թ.
ՀԱՄՈ ՄՈՍԿՈՅՅԱՆ

Առաջին անգամ հայ իրականության մեջ 2000թ. հունիսի 17-ին Ֆրանսիայի սենատի «Մեդիցիս» դաիլիճում տեղի ունեցավ «Հայ-թուրքական երկխոսությունը հայկական հարցի մասին այսօր» մեկօրյա համաժողովը: Մասնակցում էին բանախոսներ ու հրավիրյալներ Ֆրանսիայից, Գերմանիայից, Բելգիայից, Շվեյցարիայից, Թուրքիայից, ԱՄՆ-ից ու Հայաստանից: Ներկա էին նաև ֆրանսիական և ֆրանսահայ մամուլի զանգվածային լրատվության միջոցները, Հայաստանի պետական հեռուստատեսության և օրաթերթերի, թուրքական ընդդիմադիր և պետական մամուլի, հեռուստատեսության լրագրողներ, սփյուռքահայ, թուրք, ֆրանսիացի մտավորականներ, Հայոց ցեղասպանության ճանաչման թուրք ջատագովներ՝ Համբուրգից հանրաճանաչ Թաներ Աքչամը և Ֆրանկֆուրտից Ալի Լրթենը, որոնք մի քանի անգամ ելույթ ունեցան համագումարի ընթացքում: Թաներ Աքչամն ու Ալի Լրթենը որպես անկեղծ երկխոսության գործընթացի սկիզբ մի անգամ ևս կոչ արեցին ճանաչել գործված ահավոր ցեղասպանությունը, ինչը առիթ է ստեղծելու «մաքուր ձեռքերով», «մաքուր խղճով», «պատմության հետ հաշտվելով» մուտք գործել 21-րդ դար: Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության ճանաչման համար պայքարող Թաներ Աքչամը հայտարարեց, թե հայ և թուրք դեմոկրատները կարող են իրենք լուծել իրենց հարցերն ազնիվ երկխոսությամբ՝ առանց օտար տերությունների ու նրանց ներկայացուցիչների միջամտության:

Համաժողովը սկսվեց Ֆրանսիայի Սենատի նախագահ Զրիստիան Պոնսլեի ուղերձի ընթերցմամբ, «Հայկական սփյուռքի հետազոտությունների կենտրոնի» (CRDA) հիմնադիր-տնօրեն Ժան-Կլոդ Քեբաբջյանի կողմից, որտեղ Սենատի նախագահը հիշեցնում է անցյալում, ինչպես նաև ներկայումս իր տարած աշխատանքների մասին Հայոց ցեղասպանության ճանաչման գործում, հույս հայտնելով, որ ներկա երկխոսությունը կարևոր քայլ կլինի հարցի կարգավորման ճանապարհին: Արժե հիշել, որ Ֆրանսիայի Սենատը մինչ այդ (2000թ. հունիսը) երկու անգամ մերժել էր ճանաչել Հայոց ցեղասպանության բանավեճը նույն այս դաիլիճում, սակայն, միաժամանակ հարկ է նշել, որ նյութական ու

ՔՆՆԱՐ-
ԿՈՒՄԵՆՐ,
ԲԱՆԱՎԵՑ



կազմակերպչական մեծ միջոցներ էր տրամադրել՝ հայ-թուրքական երկխոսության մյուս կողմից պատմական միջոցառումը կազմակերպելու համար:

CRDA-ի հիմնադիր-նախագահ Ժան-Կլոդ Զեբաբջյանը շնորհակալություն հայտնեց համաժողովի նախագահ, Ֆրանսիայի դիմադրության մշակութային մարտիկ, գրող, նախկին քաղաքագետ Լանդի Ալեգին, CRDA-ի արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու Բաֆֆի-Հերմոն Արաքսին, ելույթներով հանդես եկող թուրք և հայ մասնակիցներին: Այս խոսքը տրվեց հայ ժողովրդի բարեկամ, «Մուսա լեռան 40 օրերը» գրքի թուրքերեն քարգմանության հրատարակիչ, նախկին քաղաքագետ Լուսինե Պարազյանի (Մտամբու) որը հանդես եկավ «Մի դժբախտ պատմությունից դուրս գալու համար» գեկույցով:

Ներկաները ոգևորությամբ դիմավորեցին Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտի տնօրեն Լավրենտի Բարսեղյանի «21-րդ դարը. ներսում, թե՛ հիշատակի պաշտպանություն» թեմայով, թուրքաբան, ՀՀ գիտությունների ակադեմիայի գիտաշխատող Հակոբ Չաքրյանի՝ «Թուրքիայի շահը Հայկական հարցի լուծման մեջ», թուրք հայտնի դեմոկրատ լրագրող, նախկին քաղաքագետ Երազ Օրալ Չալիշլարի (Մտամբու)՝ «Կարողանալ հայերի հետ ապրել միասին» թեմաներով գեկույցումները:

Հետայսու, գիտաժողովի ընթացքում ելույթ ունեցավ ՀՀ առաջին նախագահի նախկին խորհրդական, արտաքին գործերի նախկին վոխնախարար, դոկտոր Ժիրայր Լիպարիտյանն իր «Վերանայել անցյալը, խորհել ներկայի մասին. հայ-թուրքական հարաբերությունների ապագան» թեմայով գեկույցումով: Մտամբուի «Բիլգի» համալսարանի դասախոս, դոկտոր Մեթե Թունչայի գեկույցումը՝ «Հայ-թուրքական հարաբերությունների ապագան», առավելաբար ներկայացնում էր Թուրքիայի պետական շրջանակների կարծիքները, ինչը բազմաթիվ ընդդիմախոսներ ունեցավ: Ի վերջո՝ «Երկխոսությունը հայերի ու թուրքերի միջև. մի նոր և խոստումնալից ուղի» թեմայով գեկույցամար համագումարը եզրափակեց Ժան-Կլոդ Զեբաբջյանը:

Մանր ասուլիսով ու միացյալ հայտարարությամբ ավարտվեց այս պատմական համաժողովը:

* Վերջին երկու գեկույցումները չեն հրատարակվում ներքո ներկայացվող գեկույցումների շարքում, որանք այլ պարբերականներում տպագրման առիթով: